«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 13
29.08.2024թ.

1. ՀԱԱՀ դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

1.1. Հաստատել ՀԱԱՀ դասախոսական կազմի ուսումնական բեռնվածության հաշվարկի նորմերում առաջարկվող փոփոխությունները:

Դասախոսության համար ձևավորել խմբեր.

- Մինչև 60 ուսանող - առկա, հեռակա ուսուցման համակարգերում (բակալավրիատ, մագիստրատուրա),
- Մինչև 25 ուսանող – քոլեջում:

Առարկայական ծրագրերի նմանության դեպքում հոսքի մեջ թույլատրել ընդգրկել տարբեր կրթական ծրագրերի ուսանողների:

Գործնական պարապմունքի համար ձևավորել խմբեր.

- Մինչև 30 ուսանող - առկա, հեռակա ուսուցման համակարգերում (բակալավրիատ, մագիստրատուրա),
- Մինչև 20 ուսանող – առկա և հեռակա ուսուցման Անասնաբուժություն և Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն կրթական ծրագրերի դեպքում (բակալավրիատ, մագիստրատուրա),
- Մինչև 15 ուսանող – քոլեջում,
- «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դեպքում՝ աշխատանքային անվտանգության պայմաններն ապահովելու նպատակով՝ մինչև 15 ուսանող յուրաքանչյուր խմբում (առկա բակալավրիատ, քոլեջ):

Լաբորատոր պարապմունքի համար ձևավորել խմբեր.

- Մինչև 17 ուսանող - առկա, հեռակա ուսուցման համակարգերում (բակալավրիատ, մագիստրատուրա, քոլեջ) ոչ մասնագիտական առարկաների դեպքում,
- Մինչև 10 ուսանող – առկա, հեռակա ուսուցման համակարգերում (բակալավրիատ, մագիստրատուրա, քոլեջ) մասնագիտական առարկաների դեպքում (աշխատանքային անվտանգության պայմաններն ապահովելու նպատակով):

Ինքնուրույն աշխատանքի համար կիսամյակի ընթացքում դասախոսին հատկացնել 1 ժամ՝ 2 ուսանողի համար:

Ամբիոնի վարիչի լսարանային ծանրաբեռնվածությունը սահմանել.

- 0,25 հաստիք, եթե տվյալ ուսումնական տարվա ընթացքում իր ղեկավարած ամբիոնը պատասխանատու է 61-ից ավելի քոլեջի, բակալավրիատի ավարտական աշխատանքի (դիպլոմային նախագծի) և/կամ մագիստրոսական թեզի պատրաստման համար և ամբիոնի վարիչը ներգրավված է գիտական գործունեության մեջ. կամ բարձր վարկանիշ ունեցող գիտատեխնիկական շտեմարաններում Սկոպուս (Scopus) և Վեբ

օֆ Սայնս (Web of Science) Q 1-Q 4 քառորդներում վերջին երկու տարում ունի տպագրված առնվազն 1 հոդված՝ հանդես գալով ՀԱԱՀ -ի անունից:

- 0,5 հաստիք, եթե տվյալ ուսումնական տարվա ընթացքում իր ղեկավարած ամբիոնը պատասխանատու է 11-60 քոլեջի, բակալավրիատի ավարտական աշխատանքի (դիպլոմային նախագծի) և/կամ մագիստրոսական թեզի պատրաստման համար և/կամ ամբիոնի վարիչը ներգրավված է գիտական գործունեության մեջ:

- 1,0 հաստիք, եթե տվյալ ուսումնական տարվա ընթացքում իր ղեկավարած ամբիոնը պատասխանատու է մինչև 10 քոլեջի, բակալավրիատի ավարտական աշխատանքի (դիպլոմային նախագծի) և/կամ մագիստրոսական թեզի պատրաստման համար (այս դրույթը վերաբերվում է նաև գիտական գործունեության մեջ չներգրավված սպասարկող ամբիոնների վարիչներին:

1.2. Հանձնարարել Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Դաշտոյանին ուսումնական ստորաբաժանումների հետ քննարկել և սեղմ ժամկետում ներկայացնել կրթական ծրագրերի և ուսումնական պլանների փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների հիմնավորումներ:

2. ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ.

2.1. Հաստատել ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգում առաջարկվող գիտելիքի գնահատման բազմագործոնային համակարգի փոփոխությունները:

Առկա և հեռակա ուսուցման ձևերում
գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչները

Բաղադրիչ	Մասնաբաժինը, %	
	Առկա ուսուցման ձևում	Հեռակա ուսուցման ձևում
Հաճախումներ	15	15
Ինքնուրույն աշխատանք	30	30
Միջանկյալ քննություն/ընթացիկ ստուգում	25	-
Ամփոփիչ քննություն/ամփոփիչ ստուգում	30	55

2.2. ՀԱԱՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կանոնակարգի 2.12 կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Ինքնուրույն աշխատանքի հանձնումն ու պաշտպանությունը կազմակերպվում է կիսամյակի ընթացքում: Առարկայի քննությունից 3 օր առաջ արդյունքները պետք է մուտքագրված լինեն e-Buh հարթակ»:

3. ՀԱԱՀ 2024-2025 ուստարվա ուսման վարձավճարների հաստատման հարցի վերաբերյալ.

3.1. Հաստատել ՀԱԱՀ 2024-2025 ուստարվա վճարովի ուսուցման համակարգի բակալավրիատի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների

ուսանողների, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսումնառողների ուսման վարձավճարի չափերն ըստ կրթական ծրագրերի և/կամ մասնագիտությունների:

4. ՀԱԱՀ մեթոդական խորհրդի դրական կարծիքով գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված հարցերի հաստատման վերաբերյալ.

4.1. «Գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի գենային ինժեներիա և կիրառական կենսատեխնոլոգիա» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման (հեղինակներ՝ Մ.Վ. Բաղալյան, Տ.Բ. Ալոյան, Վ.Թ. Դիլանյան):

4.2. 031802.00.7 «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության, 031802.04.7 «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարել կիսամյակների տեղափոխություն:

4.3. Հաստատել Գեո-ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում համատեղ ասպիրանտական կրթական ծրագրի ուսումնական պլանը:

4.4. Հաստատել 071804.00.6 «Ագրարային ճարտարագիտություն» մասնագիտության, 071804.02.6 «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկվող առարկաների տեղափոխությունն ըստ կիսամյակների:

4.5. 072101.00.7 Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության, 072101.01.7 «Պարենամթերքի տեխնոլոգիա» մագիստրոսական, 084101.00.6 «Անասնաբուժություն» մասնագիտության, 084101.01.6 «Անասնաբուժություն» բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերը վերանայել ու ներկայացնել գիտական խորհրդի հաջորդ նիստի հաստատմանը:

5. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում փոփոխություն կատարելու անհրաժեշտության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ հեռակա ուսուցման ձևի ուսումնական պլանների 9-րդ կիսամյակում արտադրական պրակտիկայի ժամկետը սահմանել 6 շաբաթ:

6. ՀԱԱՀ-ում թեկնածուական մինիմումներ հանձնելու համար սահմանված վճարը վերանայելու հարցի վերաբերյալ.

Այլ կազմակերպություններում հետազոտողի կրթական աստիճանում ուսումնառողները ՀԱԱՀ-ում թեկնածուական մինիմում հանձնելու համար վճարում են 18 հազար դրամ մեկ առարկայի համար:

7. ՀՊԱՀ գիտական խորհրդի 2006 թ. հունիսի 1-ի որոշումը վերանայելու հարցի վերաբերյալ.

Միջին մասնագիտական կրթական աստիճանից բակալավրիատ տեղափոխված ուսանողների առարկայական տարբերության մեկ ժամի համար վճարը սահմանել 1000 դրամ:

8. «21AG-4D065» ծածկագրով գիտական թեմայի 2023-2024թթ միջանկյալ հաշվետվության հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել 21AG-4D065» ծածկագրով «Գյուղատնտեսական կենսատեխ-նոլոգիաներ՝ ջերմային սթրեսի կարգավորումը ձկների և ընտանի թռչունների մոտ» գիտական թեմայի միջանկյալ հաշվետվությունը և երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ

բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար (թեմայի ղեկավար՝ Աստղիկ Փեփոյան):

9. ՀԱԱՀ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի Կենդանագիտության և մորֆոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Միքայել Միքայելյանի՝ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթին ներկայացված գիտական թեմայի հայտի երաշխավորման հարցի վերաբերյալ.

«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթին ներկայացված «Պրոբիոտիկների ազդեցությունը հավերի աղիքային միկրոբիոտայի վիա՝ ԴՆԹ-ի մեթիլացումը» անվանումով գիտական թեմայի հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու համար (թեմայի ղեկավար Միքայել Միքայելյան):

10. Դեվիդ Մխիթարի Միրզոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

10.1. ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Դեվիդ Մխիթարի Միրզոյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Կադրային քաղաքականության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգում և դրանց լուծման հնարավորությունները» անվանումով՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

10.2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյանին:

11. Տաթևիկ Արտակի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոոխության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի Մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Տաթևիկ Արտակի Սարգսյանի՝ Զ.02.01 - «Գյուղատնտեսական կենդանիների բուծում, կերակրման և անասնաբուծության տեխնոլոգիա» մասնագիտությամբ «Սևանի իշխանը, որպես ակվակուլտուրայի նոր օբյեկտ» անվանումով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հովհաննեսի Հովհաննիսյանին:

12. Անուշ Պարգևի Տոնապետյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխության հացի վերաբերյալ.

ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի Ավտոտրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Անուշ Պարգևի Տոնապետյանի՝ Ե.20.01 - «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ «Արմատապտուղների բերքահավաքի փոքրաչափ մեքենայի մշակում և պարամետրերի հիմնավորում»

անվանումով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մյասնիկի Եսոյանին:

13. Ա. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի դուալ ուսուցման համակարգով կրթական ծրագրի հաստատման հարցի վերաբերյալ.

Հաստատել «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն» մասնագիտության «Տեխնոլոգ՝ խմորման արտադրության և գինեգործության» որակավորմամբ կրթական ծրագրի ուսումնական պլանը «Գինեգործություն (խաղողագործություն և էնոլոգիա)» կրթական ծրագրի նույն բովանդակությամբ:

14. Գևորգ Ռուբենի Նալբանդյանին ՀԱԱՀ բակալավրիատում ուսումը շարունակելու երաշխավորության հարցի վերաբերյալ.

Աստվածաբանության դոկտոր Գևորգ Ռուբենի Նալբանդյանին երաշխավորել ուսումը շարունակել ՀԱԱՀ Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի «Անասնաբուժություն» մասնագիտության առկա ուսուցման համակարգի բակալավրիատում:

15. Միջազգային կապերի դեպարտամենտի կողմից մշակված փաստաթղթերի հաստատման հարցի վերաբերյալ.

15.1. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի արտաքին կապերի և միջազգային համագործակցության քաղաքականությունը 2024-2029» փաստաթղթում առաջարկվող փոփոխությունները:

15.2. Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «միջազգայնացումը տանը» քաղաքականությունը 2024-2029» փաստաթուղթը:

16. Ցերեկային ուսուցման մագիստրատուրայի դասընթացները օրվա ցերեկային ժամերին կազմակերպելու առաջարկության վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին ճշտել և մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը ներկայացնել առաջարկություններ մագիստատուրայի դասընթացների ձևաչափի և ժամանակի վերաբերյալ:

17. Համալսարանում ակադեմիական ազնվության պահպանման և գրագողության դեպքերի բացառման հարցի վերաբերյալ.

Գրագողություն կատարած ՀԱԱՀ աշխատակիցը չպետք է շարունակի իր գործունեությունը համալսարանում:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ